



V STARTER FRUIT

ՄՐԳԱՅԻՆ ԲՈՒՅՐԵՐԸ ԼԻԱՐԺԵՔ ԱՐՏԱՅԱՅՏՈՂ ԽՄՈՐՄԱՆ
ԱԿՏԻՎԱՑՈՒՑԻՉ և ԿԵՆՍԱԿԱՐԳԱՎՈՐԻՉ



ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Խմորիչի աուտոլիզատներ (99,85%), որոնք ինքնին հարուստ են ամինաթթուների միացություններով և պոլիսախարիդներով, ինչպես նաև թիամինով (0,15%):



ԲՆՈՒԹԱԳԻՐ

V STARTER FRUIT-ը ակտիվային խմորման չափազանց նորարար ակտիվացուցիչ է, որն ապահովում է անհապաղ յուրացվող ազոտի հավասարակշռված մատակարարում: Այն համարվում է «ՉՈՐՐՈՐԴ ՍԵՐՈՒՆԴ», քանի որ ստեղծվել է ազոտային սնուցման վերաբերյալ ամենավերջին փորձարկումների (*)(**) ընթացքում, որոնք հրապարակվել են Vason Group-ի գիտահետազոտական դեպարտամենտի կողմից՝ վերահսկողության տակ պահելու անցանկալի մետաբոլիտների (ացետալդեհիդ, ցնդող թթու...) արտադրությունը և օպտիմալացնելու խմորիչի նյութափոխանակությունը՝ մաքուր խմորում և մրգային բույրերի լիարժեք արտահայտում ստանալու համար: Դրա բաղադրությունը, որը լայնածավալ ուսումնասիրությունների և կիրառությունների արդյունք է, չի պարունակում ամոնիակային ազոտի աղբյուրներ: Լավագույն արդյունք ստանալու համար խորհուրդ է տրվում օգտագործել այն պատվաստման ժամանակ: Այդ դեպքում խմորիչը, խաղողանյութի մեջ պարունակվող ամոնիակային ազոտի սպառման հետ մեկտեղ, օգտագործում է ազոտի այլ աղբյուրներ, այսինքն՝ ամինաթթուների աղբյուրներ, որոնք բնական եղանակով առկա են խմորման հյութում և V STARTER FRUIT-ում պարունակվող հատուկ աղբյուրներ, որոնք անհրաժեշտ են ֆերմենտային համալիրների, անուշաբույր նյութերի և այլնի ձևավորման համար: Ընտրված խմորիչների աուտոլիզատների առանձնահատուկ առանձնահատկությունն այն է, որ դրանք հարուստ են ազոտի սննդային տարրերով և բնական պոլիսախարիդներով և խմորիչ բջիջների պատերով, որոնք ապահովում են լավ դետոքսիկացնող ուժ և վերահսկում են խմորիչի նյութափոխանակությունը օպտիմալ ռեդոքս հավասարակշռության պայմաններում, որպեսզի պաշտպանեն խաղողանյութի և գինիների անուշաբույր նյութերը: Թիամինի առկայությունը նաև հանգեցնում է խմորիչի՝ սահմանափակ քանակությամբ ացետալդեհիդների և կետոթթուների արտադրման, ինչը թույլ է տալիս վերջնական գինու մեջ պահպանել ակտիվ ծծմբի երկօքսիդի ավելի մեծ չափաբաժին:



ԿԻՐԱՌՈՒՄ

V STARTER FRUIT-ը, շնորհիվ իր բաղադրության, որը հիմնված է ազոտի բաղադրիչներով և պոլիսախարիդներով ինքնին հարուստ թիամինի և խմորիչի ակտիվացուցիչի վրա, հատուկ ուսումնասիրվել է ակտիվային խմորման առաջին փուլերի և լիարժեք մրգային գինիների պատրաստման համար:

Այն կարող է օգտագործվել նաև փրփրուն գինիների «Pied de cuve»-ի համար, եթե նպատակը ավելի բարձր մրգային բույրեր ստանալն է:

ATTIVANTI DI
FERMENTAZIONE

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐ. 30/01/2017 ■



V STARTER FRUIT

ՄՐԳԱՅԻՆ ԲՈՒՅՐԵՐԸ ԼԻԱՐԺԵՔ ԱՐՏԱՅԱՅՏՈՂ ԽՄՈՐՍԱՆ
ԱԿՏԻՎԱՑՈՒՑԻՉ և ԿԵՆՍԱԿԱՐԳԱՎՈՐԻՉ

V STARTER FRUIT օգտագործելիս հետևեք գործող համապատասխան
իրավական կարգավորումներին:

ENOLOGICA
VASON

Enologica Vason S.p.A.
Via Nassar, 37 | 37029 S. Pietro in Cariano (VR) - Italy | Tel. +39 045 6859017 | Fax +39 045 7725188
info@vason.com | www.vason.com



V STARTER FRUIT

ՄՐԳԱՅԻՆ ԲՈՒՅՐԵՐԸ ԼԻԱՐԺԵՔ ԱՐՏԱՅԱՅՏՈՂ ԽՄՈՐՍԱԼ
ԱԿՏԻՎԱՑՈՒՑԻՉ և ԿԵՆՍԱԿԱՐԳԱՎՈՐԻՉ

ԿԻՐԱՌՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ



V STARTER FRUIT-ը լուծեք ջրի մեջ 1:5 հարաբերակցությամբ, այնուհետև ավելացրեք խաղողանյութի մեջ զգուշորեն խառնելով:

ԴՈՉԱՎՈՐՈՒՄ



Նորմալ վինիֆիկացիայի դեպքում՝ 15-ից 40 գր/հլ:
«Pied de cuve»-ի համար վերը նշված չափաբաժինը կարող է ավելացվել:
Ուշադրություն՝ 40 գր/հլ V STARTER FRUIT-ն առաջացնում է 60 մգ/հլ տիամին:

ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ



500 գր պոլիլամինացված տոպրակներ, 15 կգ պարկեր:

ՊԱՅԵՍՏԱՎՈՐՈՒՄ



Պահել զով, չոր տեղում, լույսից հեռու: Չզուշորեն կնքել բաց տոպրակները և պարկերը:

ՎՏԱՆԳ



Եվրոպական գործող կանոնակարգերի հիման վրա արտադրանքը դասակարգվում է. ոչ վտանգավոր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(*) “Changes in Wine as a Consequence of Nitrogen Supplementation in Grape Must” (Agostino Cavazza, Istituto Agrario di San Michele / Italy, M. Caputo, E. Bocca, R. Ferrarini, P. Giudici)

(**) “Acetaldeide? Limitarla si può” (E. Bocca, R. Ferrarini, Università di Verona/Italy, E. D’Andrea e E. Dai Prè)